Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՍԲՑ. ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(26 փետրվարի 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Մեր հավատի ուխտը ոչ թե մարդու հետ է,
որ երեխայի նման խաբվենք,
այլ Աստծու հետ է անլուծելի կերպով,
որ անհնար է բանդել ու հեռանալ ո՛չ այժմ եւ ո՛չ էլ հետո.
ո՛չ հավիտյանս եւ ո՛չ էլ հավիտենից»
(*Եղիշե*):

Վեհափա՛ռ Տեր, Գերաշնո՛րհ Սրբազան Հայրեր, հոգեւո՛ր եղբայրներ եւ սիրելի՛ հավատացյալներ,

Միաշունչ եւ միախորհուրդ աղոթքի հավաքված Ս. Պատարագի խորհրդի շուրջ Ղեւոնդյանց քահանայից բարեխոսությունն ենք հայցում ամենքիս՝ հայրենի մեր երկիր Հայաստանի ու Արցախի եւ առաքելահիմն մեր Եկեղեցու համար, նաեւ վերստին վկայում մեր հավատի ուխտի ակունքի մասին, որ անսկիզբ ու անվախճան Աստծու հետ է: Անկախ նրանից, թե հարափոփոխ ժամանակը որքան է հոսել ու մեզ հեռացրել այսօր հիշատակվող սուրբերի ապրած օրերից, Ղեւոնդյանք օրինակ ու առաջնորդ են յուրաքանչյուր հոգեւորականի. օրինակ ոչ միայն «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» կյանքը տալու, այլեւ այդ նույն չափօրինակի համեմատ աստվածահաճո կյանք ապրելու: Իբրեւ տարաստիճան նվիրյալ հոգեւորականներ նրանք ամենաճշմարիտ օրինակներն են ընտանիքի հոր, որովհետեւ Եկեղեցում ու Եկեղեցով է բացահայտվում ընտանիքի կերպարը, դերն ու առաքելությունը: Եւ քանի որ 2019 թ. Ամենայն Հայոց Հայրապետի կողմից հռչակվել է «Ընտանիքի տարի», ավելորդ չենք համարում անդրադարձ ունենալ ընտանիքի քրիստոնեական ընկալմանը:

Ընտանիքն աստվածահիմն հաստատություն է։ Իր սկզբնավորման ակունքում այն ունի Աստծու օրհնությունը եւ եզակի վերափոխիչ մի զորություն, որ «ես»երից «մենք» ու միություն է կերտում։ Ընտանիքի արարումով փարատվում է մարդու տրտմության պատճառ մենությունը, հնարավորություն ստեղծվում մարդկային ցեղի շարունակման, երկու սեռերի փոխլրացման ու արարչադիր հատկանիշների արծարծման եւ վերջապես «խորհուրդ խորին» Սիրո կենսագործման։ Ընտանիքն այն սրբազան տարածքն է, որտեղ սերնդեսերունդ սրբագործվում են նվիրական արժեքները, բյուրեղանում եւ փոխանցվում սերունդներին արմատներին հավատարմությամբ հնարավորություն տալով առողջ ու կենսունակ ճյուղեր արձակելու։ Պատահական չէ, որ մեր Եկեղեցին ընտանիքի ծննդյան խորհուրդ Ս. Պսակին Մկրտությանը համահավասար անկրկնելի խորհրդի կարգավիճակ է տվել եւ նվիրագործել ըստ Աստծու խոսքի։

Սիրելինե՛ր, ընտանիքը կանգուն ու անսասան է մնում այն կազմող երկու սյուների ամրության շնորհիվ, որ թեեւ գործառույթներով տարբեր, սակայն առաքելությամբ ու նպատակներով միասնական են։ Իբրեւ հավասար ամոլներ՝ սիրո լուծն ուսած ամուսինները հանձն են առնում հերկն ուղիղ պահել, որ ինքնուրույնաբար անելը դժվար է, սակայն Տիրոջով քաղցր ու հաճելի (հմմտ. Մատթ. ԺԱ. 30)։ Գաղտնիք չեմ բացի ասելով, որ ընտանիքի հարատեւության ու բարգավաճման երաշխիքները վստահությունը, հարգանքն ու սերն են։ Այս գանձերը շահեցնելով է միայն, որ տարիների ընթացքում ընտանիքն առավել կայուն ու ամուր է դառնում, իսկ այդ հարկ ոտք դնելը՝ ցանկալի ու հաճելի։ Դրանց պակասն ու կարեւորության թերագնահատումը շատ հաճախ հանգեցնում է հայ ակութների կազմաքանդման եւ «ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մարկ. Ժ. 9) արարչական հրամանի զանցառմանը։ Այսօր հայ ընտանիքն ու քրիստոնեական-ավանդական արժեքները վտանգված են, տարբեր միջոցներով չարի ամենօրյա հարձակումներին ենթակա, քանի որ հենց ընտանիքն է հայ-քրիստոնյայի կերտման ու կայացման դարբնոցը։

Ընդհանուր այս ուրվապատկերում դրական իմաստով մի փոքր առանձնանում է քահանայի ընտանիքը։ Նույնիսկ նորաօծ քահանան, ընտանյոք իր նշանակման վայր տեղափոխվելու առաջին իսկ օրվանից օրինակ է դառնում շրջապատի համար իր առօրյայով ու

կենցաղավարությամբ, ներդաշնակությամբ ու ծառայելու պատրաստակամությամբ։ Իր զավակների համար լավ հայր, իր տան լավ տնտես ու կառավարիչ լինել է սովորում, նախ իր հարկի տակ փորձում կենսագործել ավետարանական չափանիշները, որոնք հետո փոխադրում է համայնքային դաշտ։ Նույն այս սկզբունքը Ս. Պողոս առաքյալն է նշում Տիմոթեոսին ուղղված հրահանգներում. «Եթե մեկն իր տունը կառավարել չիմանա, հապա ինչպե՞ս Աստծու եկեղեցուն խնամակալ կլինի» (Ա. Տիմ. Գ. 5)։

Քահանան, սակայն, իր ծառայությունն ամբողջական չի կարող համարել, եթե եկեղեցում իր կողքին չունի երեցկնոջ, իբրեւ տիկնանց միության ու երգչախմբի աշխույժ ու գործուն անդամի, եւ զավակների, իբրեւ երիտասարդաց միության ու դպիրների աջակցությունը։ Հետեւաբար այստեղ բոլորանվեր ծառայության է ակնկալվում ընտանիքի յուրաքանչյուր անդամից՝ քահանա հոր գլխավորությամբ, որ առաջին հերթին պատասխանատու եւ հաշվետու է Աստծու առաջ։ Եթե քահանան հաջողում է, մեր երկնավոր «Հոր օրհնյալ» է անվանվում (հմմտ. Մատթ. ԻԵ. 34), գովեստի արժանանում Տիրոջից, ինչպես Պողոս առաքյալն է գրում Տիմոթեոսին. «Այն երեցները, որոնք լավ վերակացուներ են, կրկնակի պատվի արժանի թող լինեն, մանավանդ նրանք, որ տքնում են խոսքով եւ ուսուցանելով» (Ա. Տիմ. Ե. 17), հակառակ դեպքում արժանանում են նրա նախատինքին (հմմտ. Մատթ. ԻԵ. 34)։

Քահանան իր պաշտոնի եւ առաքելության մեջ է ամեն օր եւ շուրջօրյա, իսկ ընտանիքի անդամները գիտակցում են, որ այն, ինչ մյուսներին «արտոնելի» կամ «ներելի» է, իրենց համար մերժելի է, եթե տարբեր է Աստվածաշնչի թելադրած օրհնաբեր չափանիշից։

Այս ընտանիքով, այսպես ասած, «միջնաբերդով» զորավոր քահանան ստանձնում է իր մյուս՝ ավելի մեծ ընտանիքի ծուխի ու համայնքի առաջնորդությունը, որ ավելի մեծ շնորհներ է, թե՛ պահանջում եւ թե՛ բերում։ Այս ընտանիքն է, որ քահանային թիկունքը զորավոր եւ բազուկներն ուժեղ զգալու հնարավորություն է տալիս, նաեւ վստահություն, որ նույնիսկ անհաղթահարելի խոչընդոտները հարթվում են Հովվապետի հետ իրենց մեկ զգացող հոտի առաջ (հմմտ. Հովհ. Ժ. 16)։ Այս վստահությամբ քահանան իր առաջին ընտանիքի իր հոտի հետ է մնում ոչ միայն Գողգոթայի ճանապարհներին, այլեւ հայոց պատմության փառահեղ էջերն արձանագրելիս։ Վկաները բազում են Ավարայրից մինչեւ Սարդարապատ ու

Արցախյան գոյամարտ։ Որովհետեւ «մեր հավատի ուխտը ոչ թե մարդու հետ է... այլ Աստծու հետ՝ անլուծելի կերպով»։

Քահանայի համար առանձնահատուկ մի ընտանիք է հայոց բանակը, որի կողքին ու շարքերում է միշտ, թե՛ անցյալում եւ թե՛ այսօր՝ պատրաստ նրա հետ ճաշակելու պատերազմի ու պարտության դառնությունը եւ հաղթանակի բերկրանքը։ Հազկերտին Արտաշատից գրված նամակում, կրոնափոխ լինելու հրամանին ի պատասխան, հայոց ավագանին, հոգեւորականությունն ու ժողովուրդը խիզախորեն պատասխանում են. «Մենք ոչնչով ավելի լավը չենք մեր նախնիներից, որոնք այս հավատի համար դրին իրենց գույքն ու ստացվածքը եւ մարմինները» (Եղիշե)։ Եւ խոսքն ապացուցվում է գործով։ Հայ քահանան պատերազմի դաշտ է դուրս գալիս պաշտպանելու հայոց հավատը եւ առաջնորդելու իր մեծ ընտանիքը, որ ողջ հայությունն էր։ Միասնության այսպիսի պահերն են, որ պատվար են դառնում չարի սանձազերծած ամենամեծ արհավիրքներին։ Հազկերտի մտադրությունն անկատար է մնում. հայը շարունակում է պաշտել իր Աստծուն։

Սիրելի՛ եղբայրներ, պատահական չէ, որ սրբոց այս խումբը հենց քահանայի Ղեւոնդ երեցի անունով է կոչվում։ Ինչպես մեր վիպագիրներից Ծերենցն է ասում՝ «Տվե՛ք ինձ մի Ղեւոնդ, եւ ես ձեզ կտամ տասը Վարդան»։ Ղեւոնդներն էին, որ յուրաքանչյուրն իր գյուղում ու քաղաքում հավատացելոց սրտում ջերմ էին պահում Հիսուսի նկատմամբ հարատեւ սերն ու կենդանի հավատը, հարատեւ ու կենդանի այն աստիճան, որ ամեն մեկն իրեն պատրաստ էր տեսնում արյունը, կյանքը տալու «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»։ Իսկ հավատը երբեք տեսություն չէ ու չի քարոզվում լոկ բարձր բեմերից, այլ նախ եւ առաջ կյանք է ու զոհաբերություն, որ տրված օրինակով սերունդներ է կրթում եւ ամեն նոր ժամանակին համահունչ Ղեւոնդներ ու Վարդաններ ասպարեզ բերում։ Նվիրական այս երկու անունները կապված են իրար ապրած ու նահատակության ժամանակաշրջանով, նաեւ տոնվում են իրար կից, մեկ օրվա միջակայքով նույն շաբաթվա ընթացքին։

Վեհափա՛ռ Տեր, գալիք Վարդանանց տոնը Ձեր անվանակոչության օրն է։ Թույլ տվեք հոգեւոր եղբայրներիս անունից շնորհավորել Ձեզ այդ եւ ընտրության ու գահակալության 20-ամյակի առիթով, որ նշվելու է այս տարի։ Քսան տարիներ, որ բեղուն գործունեության շրջան եղան, եկեղեցաշինության ու հոգեւոր զարթոնքի, նաեւ Տիրոջ առատ հունձքի համար

գործունյա ու հավատավոր մշակներ հանելու (հմմտ. Ղուկ. Ժ. 2), մշակներ, որ իրենց ամենօրյա եւ հատկապես Ս. Պատարագի ժամանակ արված աղոթքով որդիական խոնարհությամբ նեցուկ են լինում Ձեզ՝ Ձեր առաքելության մեջ արեւշատություն, կյանքի երկար օրեր եւ Տիրոջ զորակցությունը հայցելով։ Փոխադարձաբար Ձեր հայրական հորդորներն ու իմաստուն առաջնորդությունն է, որ մեզ ամրապնդում է Միածնաէջ այս սուրբ վայրում ձեռնադրության ժամանակ արած ուխտին ցկյանս հավատարիմ մնալու, քանի որ՝ «մեր հավատի ուխտը ոչ թե մարդու հետ է, որ երեխայի նման խաբվենք, այլ Աստծու հետ է անլուծելի կերպով, որ անհնար է քանդել ու հեռանալ ո՛չ այժմ եւ ո՛չ էլ հետո. ո՛չ հավիտյանս եւ ո՛չ էլ հավիտենից». ամեն։